ԱԴՐԲԵՋԱՆ. ՇՐՋԱՓՈՒԼԻ ԱՎԱՐՏԸ

Սարգիս Հարությունյան

2005թ. նոյեմբերի 6-ին Ադրբեջանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններով տրամաբանական ավարտ ստացավ դեռևս 2003թ. ամռանից այդ երկրում սկիզբ առած իշխանափոխության գործընթացը:

Աշխարհաքաղաքական զարգացումների առումով ձևավորված իրավիճակը, թերևս, կարող է վկայել 2003թ. նոյեմբերին վրացական «վարդերի», մեկ տարի հետո ուկրաինական «նարնջագույն» հեղափոխություններից և Վաշինգտոնի ուզբեկական անհաջողությունից հետո Հարավային Կովկասում ժամանակավոր փոխհամաձայնության մի տարբերակի մասին:

2003թ. օգոստոսի 4-ին վարչապետի պաշտոնում Իլհամ Ալիևի նշանակվելը, իրականում, ի հայտ բերեց ավելի շատ հարցեր, քան տվեց արդեն գոյություն ունեցող խնդիրների պատասխանը: Ալիև-կրտսերի գալուստը բնորոշվեց Հեյդար Ալիևի ժառանգություն թողած կլանային կառույցի ընդհանուր թուլացմամբ, ինչն Ադրբեջանի պարագայում նշանակում էր ողջ պետական համակարգի թուլացում:

Ալիև-ավագից ժառանգություն մնացած կառույցի ներսում, ընդհանուր առմամբ, պահպանվել էր առկա գործառութային մեխանիզմների տրամաբանությունը՝ բուն իշխանական բուրգի ներսում գոյություն ունեցող հարաբերությունները, գործակցությունը ընդդիմության հետ, համակարգի հոգեբանական-աշխարհայացքային հստակ կառուցվածքը, ոչ ռազմավարական բնույթի հարցերում հավասարակշռության սկզբունքի կիրառումը: Այդ առումով բավական անձնավորված համակարգի պայմաններում՝ Իլհամ Ալիևի «գալուստը» չէր կարող խնդիրներ չառաջացնել:

1991թ. ի վեր առաջին անգամ ադրբեջանական պետությունում փորձ էր արվելու իշխանության փոխանցումն իրականացնել հնարավորինս առանց հակահամակարգային ցնցումների կամ առավել ևս՝ առանց գոյություն ունեցող համակարգի կործանման: Հարկ է նշել, որ վերջինս բավական բնորոշ էր մինչալիևյան ժամանակահատվածին՝ 1990-ական թթ. սկիզբ, երբ պետական հեղաշրջումների միջոցով իշխանության եկան Աբուլֆազ Էլչիբեյը (1992թ.), Հեյդար Ալիևը (1993թ.)[1]: Այդ իմաստով 2005թ. նոյեմբերի 6-ի

[1] Անշուշտ, պետք է հավելել նաև 2004թ. հոկտեմբերին Ադրբեջանի այն ժամանակվա վարչապետ Սուրաթ Հուսեյնովի փորձը պետական հեղաշրջմամբ զավթել իշխանությունը և 1995թ. մարտին ադրբեջանական ոստիկանության հատուկ նշանակության ջոկատի հրամանատարներ՝ Ջավադով եղբայրների խռովության փորձը:

խորհրդարանական ընտրություններն Ադրբեջանում պետք է առաջին հերթին դիտարկել որպես ադրբեջանական պետության մեջ իշխանափոխության աննախադեպ գործընթացի ավարտական փուլ:

Ադրբեջանի իշխանական համակարգում կլանային փոխդասավորվածության ընդհանուր պատկերը Հեյդար Ալիևի մահվանից հետո

Արդեն 2003թ. աշնանը՝ Հեյդար Ալիևի մահվանից հետո, Ադրբեջանի որոշումների կայացման մեխանիզմում տեղի էին ունեցել բավական լուրջ փոփոխություններ, որոնց պայմաններում Ալիև-կրտսերը, ըստ էության, կորցրել էր միանձնյա որոշումներ կայացնելու կարողությունը: 2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրություններն էլ ավելի հաստատեցին այդ իրավիճակը՝ Ադրբեջանի իշխանական համակարգում ուրվագծելով ուժի մի քանի կենտրոններ:

Ուժի առանձին ու, թերևս, 2003թ. աշուն-2004թ. ամառ ժամանակահատվածում ամենաուժեղ կենտրոն էր ձևավորել հանգուցյալ Հեյդար Ալիևի եղբայր Ջալալ Ալիևը, որի շուրջ համախմբվել էին նախկինում միասնական դիրքերում հանդես եկող «նախիջևանյան» կլանի մի շարք ազդեցիկ ներկայացուցիչներ՝ առողջապահության և տնտեսական զարգացման այլևս նախկին նախարարներ Ալի Ինսանովն ու Ֆարհադ Ալիևը, կրթության նախարար Միսիր Մարդանովը և այլք:

Պետք է ենթադրել, որ այդ ժամանակահատվածում Ջալալ Ալիևի խմբավորմանն էր հարում նաև 1994թ. հոկտեմբերից Ադրբեջանի ազգային անվտանգության (ԱԱՆ) նախարարի պաշտոնն զբաղեցնող Նամիկ Աբասովը[1] և որոշ իմաստով նաև ադրբեջանական խորհրդարանի խոսնակ Մուրթուզ Ալեսքերովը, թեև այդ մարդիկ առաջին հերթին հանդես էին գալիս ինքնուրույն դիրքերից և շատ հաճախ մաններում էին:

Ջալալ Ալիևի խմբավորման «գաղափարական» դրույթը դժգոհությունն էր «իշխանությունը երիտասարդին փոխանցելու» հանգամանքից: «Իշխանափոխությունից», բնականաբար, դժգոհ էին Հեյդար Ալիևի հետ դեռ խորհրդային տարիներին աշխատած և Ադրբեջանի քաղաքական ու տնտեսական դաշտերում բավական լուրջ ազդեցություն ունեցող մարդիկ: 2003թ. ամռանից հետո, բավական երկար ժամանակ՝ առնվազն մինչև 2005թ. գարնան վերջ, այդ խմբավորման ներկայացուցիչներն Իլհամ Ալիևի նախագա-

[1] Հայտնի էին Ադրբեջանի ազգային անվտանգության նախարար Նամիկ Աբասովի և Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիևի միջև առկա՝ երբեմն բավական սուր բնույթ ստացող հակասությունները: Ըստ «պաշտոնական» տեղեկությունների՝ Ռամիզ Մեհթիևը «նախիջևանյան» մեծ կլանի շարուրյան (Շարուրի շրջան) խմբավորման ղեկավարն է, մինչդեռ Նամիկ Աբասովը նույն «նախիջևանյան» մեծ կլանի օրդուբադյան (Օրդուբադի շրջան) խմբավորման ղեկավարն էր:

հությունն ավելի շատ ընկալում էին որպես ձևական տարր։

Ուժի հաջորդ կարևոր կենտրոնը Հեյդար ու Իլհամ Ալիևների աշխատակազմերի անփոփոխ ղեկավար Ռամիզ Մեհթիևն էր և նրա շրջապատը՝ Մաքսային պետական կոմիտեի ղեկավար Քյամալեդդին Հեյդարովը, Ադրբեջանի հարկային նախարարության ղեկավար Ֆազիլ Մամեդովը՝ Քյամալեդդին Հեյդարովի դրածոն։

Եվ վերջապես՝ 2003թ. աշնանը ցուցակը եզրափակում էր նորընտիր նախագահ Իլհամ Ալիևը, ով իրականում այդ ժամանակ դեռ նոր պետք է կազմակերպեր իր խմբավորումը։

Նշված ժամանակահատվածում առկա իրավիճակի «շարժիչ ուժերից» էին Ջալալ Ալիև-Ռամիզ Մեհթիև հակասությունները։ Դրանք իրենց արմատներով գնում էին դեռևս Հեյդար Ալիևի ժամանակաշրջան, որի օրոք անգամ տեղի ունեցավ ընդհանուր «նախիջևանյան» կլանի մասնատում։ Մամուլի հրապարակումների համաձայն՝ դեռևս 2001թ. Ռամիզ Մեհթիևը հիմնադրեց «երևանլիների» (Հայաստանից ներգաղթած ադրբեջանցիների) մի նոր հայրենակցական միություն՝ «Երևան բիրլի»[1]։ Հետագայում հատկապես ընդդիմադիր (ինչպես նաև իշխանական մամուլում) ամենատարբեր բնույթի վարկաբեկող հրապարակումները, որոնք առնչվում էին ադրբեջանական իշխանական կառույցի բարձրաստիճան ներկայացուցիչներին, կամ տարբեր տեսակի տնտեսական պատերազմները, թերևս, մեծ մասամբ պետք է կապել վերոհիշյալ երկու խմբավորումների միջև ընթացող պայքարի հետ։

2003թ. աշնանը այդ ամենին գումարվեց մի նոր հանգամանք։ Չպետք է բացառել, որ 2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրություններն Ալիև-կրտսերը բավական «ծանր» տարավ նաև վերը նշված խմբավորումներից առնվազն մեկի, իսկ միգուցե նաև երկուսի գործադրած ջանքերի շնորհիվ. նպատակն, անշուշտ, հնարավորինս թույլ նախագահ ունենալն էր։

Ընդհանուր առմամբ, այդպիսին էր Իլհամ Ալիևի նախագահության սկզբնական շրջանը, ուստի տարօրինակ չէ, որ հենց ի սկզբանե Ալիև-կրտսերը ձեռնամուխ եղավ Ադրբեջանի գործադիր իշխանության համակարգի կադրային փոփոխությանը։

Դեռևս 2003թ. սկզբին՝ մինչև բուժման նպատակով ԱՄՆ Քլիվլենդի նահանգ վերջնականապես մեկնելը, Հեյդար Ալիևն իր հրամանագրով զբաղեցրած պաշտոններից ազատեց Գյանջա, Մինգեչաուր, Սումգայիթ և Լենքորան քաղաքների գործադիր իշխանության ղեկավարներին՝ փոխարենը նշանակելով համեմատաբար «նոր մարդկանց»։

Ադրբեջանի շրջաններում գործադիր իշխանության ղեկավարներին,

[1] Փաստորեն, «Երևան բիրլին» առանձնացավ դեռևս 1993թ. առողջապահության նախարար Ալի Ինսանովի նախագահությամբ ստեղծված արևմտյան ադրբեջանցիների «Աղրիդաղ» (Արարատ լեռան թուրքերեն անվանումն է) միությունից։

այսինքն՝ տեղերում մեծ մասամբ իրադրության իրական տերերին փոխարինելու քաղաքականությունը շարունակեց նաև Իլհամ Ալիևը[1]։

2004թ. սկզբին գործընթացը թևակոխեց նոր փուլ. Ադրբեջանի նախագահի 2004թ. փետրվարի 20-ի հրամանագրով Ալի Աբասովը նշանակվեց կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար, ապրիլի 2-ի հրամանագրով փոխվեց երկրի արտաքին գործերի նախարարը. Վիլայաթ Գուլիևին փոխարինեց Էլմար Մամեդյարովը։

2004թ. սկզբներից նկատելի է դառնում հետագայում ավելի պարզորոշ դարձած Ռամիզ Մեհթիև-Իլհամ Ալիև պայմանավորվածության ձեռքբերումը։

Դեռ խորհրդային տարիներից ակնհայտ էին Հեյդար Ալիև-Ռամիզ Մեհթիև բավական սերտ կապերը։ Ուշագրավ է, որ Ալիև-ավագն իր կենդանության վերջին ժամանակաշրջանում պաշտոնանկ չարեց Ադրբեջանի իշխանական բուրգում նաև այդ հանգուցային պաշտոնի միջոցով շոշափելի ազդեցություն ձեռք բերած Մեհթիևին, որը կարող էր հետագայում խնդիրներ հարուցել երիտասարդ Իլհամ Ալիևի համար։ Այսինքն՝ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարը դիտարկվել է որպես ապագա իշխանափոխության գործընթացում վստահելի անձնավորություն[2]։ Ժամանակը ցույց տվեց, որ պայմանավորվածության առաջնային նպատակներից մեկն է Զալալ Ալիևի խմբավորման չեզոքացումը։

Ադրբեջանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նոր նախարարի նշանակումը կարելի է համարել այդ պայմանավորվածության առաջին նշաններից մեկը։ Ալի Աբասովը համարվում է Ռամիզ Մեհթիևի շրջապատի մաս կազմող անձնավորություն։

Հաջորդ կարևոր ցուցիչը 2004թ. վաղ գարնանը Ադրբեջանի առողջապահության նախարար Ալի Ինսանովի շուրջ ծավալվող իրադարձություններն էին։ Որոշ տեղեկությունների համաձայն՝ այդ ժամանակ նախագահական աշխատակազմից փորձ էր արվել պաշտոնանկ անել Զալալ Ալիևի հովանավորյալին, սակայն Ալիև-ավագի եղբոր, ԱԱՆ գլխավորող Նամիկ Աբասովի և ներքին գործերի նախարար Ռամիլ Ուսուբովի բռնած դիրքորոշման արդյունքում փորձը ձախողվել էր։

Եվ վերջապես, երրորդ ուշագրավ կետը վերաբերում է 2004թ. մայիսի 20-ին Բաքվում հրապարակվող *«Бакинский рабочий»* թերթում լույս տեսած

[1] 2003թ. հոկտեմբերի 15-ից (նախագահական ընտրություններից սկսած) մինչև 2005թ. օգոստոսի 12-ը ընկած ժամանակահատվածում Իլհամ Ալիևի հրամանագրով փոխվել են Ադրբեջանի ամենատարբեր շրջանների ու քաղաքների գործադիր իշխանության 21 ղեկավար։

[2] Չնայած այն հանգամանքին, որ «պաշտոնական» Բաքվի համաձայն՝ Ռամիզ Մեհթիևը «նախիջևանյան» մեծ կլանի շարուրյան խմբավորման ղեկավարն է, սակայն, ըստ որոշ տեղեկությունների, Մեհթիևը, ինչպես և Ադրբեջանի նախկին նախագահ Ալիև-ավագը, ծագումով Հայաստանի Սիսիանի շրջանից են։ Թերևս, այդտեղից՝ ընդհանուր «հայրենիքից» են առաջացել Հեյդար Ալիև-Ռամիզ Մեհթիև սերտ հարաբերությունները։

Ռամիզ Մեհթիևի[1] «Ադրբեջանը գլոբալացման դարաշրջանում. զարգացման ռազմավարություն» հայեցակարգային տարրեր պարունակող հոդվածին: Աշխատության մեջ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարը փորձում էր ի ցույց դնել իր երկրի համար ահագնացող որոշ մարտահրավերների բնույթը և ամենակարևորը՝ առաջարկել դրանց հաղթահարման սեփական հայեցակարգային միջոցներ: Գաղափարական իմաստով միջոցները պետք է հանգեին *ադրբեջանականության* կերտմանը, իսկ գործնական առումով նոր՝ երիտասարդ ընտրանու առաջքաշմանը: Ակնհայտ էր, որ Մեհթիևը հայտ էր ներկայացնում աշխարհայացքային առումով հիմնավորել Ալիև-կրտսերի՝ առաջիկայում անցկացնելիք վերափոխումները:

Այսպիսով, արդեն 2004թ. ամռան սկզբին պարզ էր, որ Ալիև-ավագի մահվանից հետո ադրբեջանական իշխող ընտրանուն չի հաջողվել հասնել փոխհամաձայնության, և հաշվի առնելով 2004թ. դեկտեմբերի 17-ին նախատեսված տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) և 2005թ. նոյեմբերի 6-ին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունները՝ արդեն այն ժամանակ պարզ էր լարվածության աճի (որոշ դեպքերում՝ անգամ կտրուկ աճի) հեռանկարը:

Զարգացումներ ուժային կառույցներում

Ազգային անվտանգության նախարարություն.- Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի 2004թ. հուլիսի 23-ի հրամանագրով պաշտոնանկ արվեց այդ երկրի ԱԱՆ-ն 1994թ. գլխավորող Նամիկ Աբասովը: Նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվեց գնդապետ Էլդար Մախմուդովը[2], որը մինչ այդ գլխավորում էր Ադրբեջանի ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչությունը[3]:

Ավելի ուշ՝ Իլհամ Ալիևի 2004թ. դեկտեմբերի 16-ի հրամանագրով, Նամիկ Աբասովը նշանակվեց Ուզբեկստանում Ադրբեջանի արտակարգ և լիազոր դեսպան:

Մախմուդովի նշանակմանը հետևեցին նոր նշանակումներ՝ 2004թ. ամռան ընթացքում Ադրբեջանի ՆԳՆ համակարգից ԱԱՆ «տեղափոխվեցին» հետևյալ անձինք՝

- Բաքու քաղաքի ոստիկանության գլխավոր վարչության Կազմակերպված հանցագործության դեմ պայքարի բաժնի պետ Խիլալ Ասադովը

[1] Իլհամ Ալիևի աշխատակազմի ղեկավարը փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է:

[2] Նշանակումից անմիջապես հետո Էլդար Մախմուդովին շնորհվեց գեներալ-մայորի կոչում, իսկ ներկայումս Ադրբեջանի ԱԱՆ ղեկավարը գեներալ-գնդապետ է:

[3] Մինչ այդ Մախմուդովը ղեկավարել է ՆԳՆ Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունը (1978թ. Էլդար Մախմուդովն ավարտել է Բաքվի Դ.Բունյաթզադեի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտի ֆինանսավարկային ֆակուլտետը): Հետագայում այդ վարչությունը վերացվեց:

նշանակվեց Ադրբեջանի ԱԱՆ Ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ,

- ՆԳՆ Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության պետի տեղակալ, գնդապետ Ալիմուսա Ալիևը դարձավ ԱԱՆ Կադրերի վարչության պետ,
- ՆԳՆ մեկ այլ սպա՝ գնդապետ Ֆարհադ Վահաբովը, գլխավորեց ԱԱՆ աշխատակազմը։

2004թ. սեպտեմբերի 1-ին ադրբեջանական «Թրենդ» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Էլդար Մախմուդովը նշում է, թե ԱԱՆ-ում սկսվել են համակարգային փոփոխություններ, որոնք կավարտվեն մոտ ապագայում։ Այդ բարեփոխումների արդյունքում ստեղծվել են մի քանի գլխավոր վարչություններ (ինչպես, օրինակ, մեկը՝ Հակաահաբեկչական կենտրոնի հիման վրա)։ Ծրագրվում էր ԱԱՆ մի քանի կառույցներ ևս վերափոխել գլխավոր վարչությունների։

2005թ. փետրվարի 12-ին հայտնի դարձավ, որ Ադրբեջանի ԱԱՆ Ռազմական հակահետախուզության գլխավոր վարչության պետ Էլման Գամբարովը, սեփական դիմումի համաձայն, ազատվել է զբաղեցրած պաշտոնից և տեղափոխվել Ադրբեջանի Պաշտպանության նախարարություն (ՊՆ)։ Գամբարովի տեղը ժամանակավորապես զբաղեցրել է նույն Ռազմական հակահետախուզության գլխավոր վարչության բաժիններից մեկի ղեկավար, գնդապետ Նիզամի Շիրինովը։

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի իշխանության օրոք որոշակի փոփոխություններ կատարվեցին երկրի ուժային համակարգերում։ Նրա 2000թ. օգոստոսի 1-ի հրամանագրով Ռազմական հակահետախուզության ծառայությունը մտցվեց Ադրբեջանի ԱԱՆ համակարգի մեջ, սակայն այդ համակարգից դուրս բերվեց Սահմանապահ զորքերի վարչությունը, որը հետագայում ձևափոխվեց Պետական սահմանապահ ծառայության։

Ըստ որոշ տեղեկությունների՝ այդ տեղափոխությունների հիմնական նպատակն էր թուլացնել Ադրբեջանի ԱԱՆ արդեն բավական երկար ժամանակ գլխավորող Նամիկ Աբասովի ազդեցությունը նախևառաջ նույն այդ ԱԱՆ-ում, որը սկսած 1994թ. հոկտեմբերից միայն աճել էր՝ թուլացնելով անգամ Հեյդար Ալիևի ազդեցությունը նախարարությունում։

Հայտնի էր, որ Աբասովը և ռազմական հակահետախուզության ծառայության պետ Էլման Գամբարովը բավական վատ հարաբերությունների մեջ էին։ Եվ, բացի այդ, սահմանապահ զորքերի դուրսբերումը միանշանակորեն նվազեցնում էր ԱԱՆ զուտ ռազմական ուժի կարողությունները՝ ԱԱՆ տրամադրության ներքո էին մնալու միայն հատուկ նշանակության ուժերը։

Հանգամանք, որը, բնականաբար, չէր խոսում Նամիկ Աբասովի օգտին։

Եվ վերջապես, համաձայն որոշ տեղեկությունների՝ Էլման Գամբարովը համարվում է Իլհամ Ալիևի մերձավոր մարդկանցից մեկը, որը կարող էր ոչ միայն ներսից հսկել ԱԱՆ-ը և անձամբ Նամիկ Աբասովին, այլև Հեյդար Ալիևի մահվանից հետո հնարավորինս կանխել Աբասովի հավանական հակաիլհամական քայլերը կամ նույնիսկ՝ Ազգային անվտանգության նախարարի նախագահական նկրտումները։

Եթե շարժվենք այս տրամաբանությամբ, ապա Էլման Գամբարովի տեղափոխումը Ադրբեջանի ՊՆ, թերևս, նպատակ է հետապնդում մեծացնել Իլհամ Ալիևի «ներկայությունը» երկրի զինված ուժերում և վերահսկողությունը պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի նկատմամբ։ Չպետք է բացառել, որ առաջիկայում Գամբարովին ՊՆ-ում շնորհվի որևիցե բարձր պաշտոն՝ հետագա աճի հեռանկարով[1]։

Զինված ուժեր.- Ադրբեջանական ԱԱՆ-ում տեղի ունեցած փոփոխությունների տրամաբանական շարունակությունը կարճ ժամանակ անց ի հայտ եկավ Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի գլխավորած գերատեսչությունում։

2005թ. հունվարի 13-ին ադրբեջանական «Զերկալո» թերթում Ադրբեջանի ՊՆ գնդապետ-լեյտենանտ Ուզեիր Զաֆարովը նշում է, թե 2004թ. դեկտեմբերին ձերբակալվել են Ադրբեջանի Բարդայի և Շամխորի զինվորական կորպուսներում ծառայող մի շարք բարձրաստիճան սպաներ, բացի այդ, իջեցվել են մի քանի տասնյակ սպաների զինվորական կոչումները և պաշտոնները։ Ըստ Զաֆարովի, ձերբակալվածների թվում էին Բարդայի կորպուսի կազմակերպչական-մոբիլիզացիոն բաժնի պետ, գնդապետ-լեյտենանտ Վագիֆ Թալիբովը, նույն կորպուսի զորամասերից մեկի հրամանատար, գնդապետ-լեյտենանտ Զիա Նաջաֆովը և այլք։

Իջեցվել էր Բարդայի կորպուսի զորամասերից մեկի հրամանատար և գնդապետ Բալայ Նասիբովի կոչումը։ Վերջինս տեղափոխվել էր ՊՆ Քաղաքացիական պաշտպանության բաժին, սակայն թե՛ Նասիբովի, թե՛ դաստիարակչական հարցերով նրա տեղակալ, մայոր Շայիղ Խալիլովի նկատմամբ հարուցվել էր քրեական գործ. քննությունն ընթանում էր Ղարաբաղի կայազորի դատարանում։

Թեև պաշտոնական հաղորդագրությունները որպես այդ ձերբակալությունների և իջեցումների հիմնական պատճառ նշում էին կոռուպցիան, սակայն, միևնույն ժամանակ, ընդդիմադիր մամուլում շրջանառության մեջ դրվեց մեկ այլ վարկած, ըստ որի՝ ադրբեջանական զինված ուժերում (ԶՈՒ) Ադրբեջանի ԱԱՆ ծավալած հետաքննչական գործունեությունը պայմանա-

[1] Ներկայումս Էլման Գամբարովը հանդիսանում է Սաֆար Աբիևի խորհրդականը։

վորված է 2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրություններով։ Նշենք, որ ըստ որոշ տեղեկությունների՝ այդ ընտրությունների ժամանակ Բարդայի և մի շարք այլ կորպուսների զինվորականության զգալի մասը ձայնը տվել է ընդդիմադիր «Մուսաֆաթ» կուսակցության ղեկավար Իսա Ղամբարին։

Այդ փաստը իսկական ցնցում էր առաջացրել երկրի ղեկավարության շրջանում։ Ընտրություններից հետո Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը փորձել էր պաշտոնանկ անել վերոհիշյալ Բալայ Նասիբովին, որն այն ժամանակ Բարդայի կորպուսի[1] զորամասի հրամանատար էր, սակայն Նասիբովի օգտին էին հանդես եկել նույն կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Գաբիլ Մամեդովը և Ադրբեջանի ՊՆ հանգուցային վարչություններից մեկի պետ Թալիբ Մամեդովը։ Պաշտպանության նախարարը ստիպված էր եղել զիջել, սակայն 2004թ. մարտին Գաբիլ Մամեդովը պաշտոնանկ արվեց և որոշ ժամանակ ՊՆ Կադրերի վարչության տրամադրության ներքո գտնվելուց հետո նշանակվեց Ղազախստանում Ադրբեջանի դեսպանության ռազմական կցորդ, իսկ Թալիբ Մամեդովը՝ Պակիստանում Ադրբեջանի ռազմական կցորդ։

Ի դեպ, հարկ է նշել, որ նույն տեղեկությունների համաձայն՝ 2003թ. հոկտեմբերին կայացած նախագահական ընտրությունների ժամանակ Բաքվի մոտ գտնվող մի շարք զորամասերի մի քանի հազար զինվորականներ դարձյալ քվեարկել էին Իսա Ղամբարի օգտին։ Եվ արդեն ընտրությունների հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին, այդ զորամասերի հրամանատարներն ազատվել էին զբաղեցրած պաշտոններից։

Ինչևէ, վերոհիշյալ ձերբակալությունների հետ կապված՝ 2005թ. հուլիսի 19-ին սկսվեցին դատական լսումները։ Մեղադրանք էր ներկայացվել ընդհանուր թվով 17 հոգու՝ Ադրբեջանի ՊՆ և ԱԱՆ միջին և բարձրաստիճան սպայական կազմից։ Ներկայումս Բաքվի Վերաքննիչ դատարանում շարունակվում է «17 սպաների» գործի դատաքննությունը։

Ի հավելումն՝ այս տարվա մայիսի կեսերին և հունիսի վերջին (շուրջ մեկ ամսվա տարբերությամբ) կաշառակերության մեղադրանքներով ձերբակալվեցին մայրաքաղաքի Նասիմինյան ու Սաբուչինյան շրջանների զինվորական կոմիսարներ Ռաշիդ Հասանովը և գնդապետ-լեյտենանտ Զահիդ Շահբազովը։

Աչքի է զարնում այն հանգամանքը, որ բոլոր ձերբակալությունները կատարվել են «կաշառակերության դեմ պայքարի» պիտակավորմամբ։ Մինչդեռ ակնհայտ է, որ ադրբեջանական ՊՆ-ում առկա լայնածավալ կոռուպցիան անհնար է չեզոքացնել նման՝ շուրջ երկու տասնյակի հասնող

[1] Ադրբեջանական ԶՈՒ բանակային Առաջին կորպուս։

ձերբակալություններով: Հետևաբար, *PR*-ային օգուտներից զատ, իրական նպատակը կարող էր լինել Սաֆար Աբիևի նկատմամբ ճնշման գործադրումը[1] և երկրի ՊՆ-ում Ալիև-կրտսերի ազդեցության ընդլայնումը[2]:

Ներքին գործերի նախարարություն.- Ադրբեջանի ուժային կառույցներում ընթացող ընդհանուր գործընթացի տրամաբանությունից դուրս չմնաց նաև գեներալ-գնդապետ Ռամիլ Ուսուբովի նախարարությունը:

2005թ. մարտի 10-ին Ադրբեջանի ԱԱՆ հատուկ գործողության շնորհիվ գլխավորապես Բաքվում վնասազերծվեց հանցավոր մի խումբ, որի անդամներից էին ադրբեջանական ՆԳՆ բարձրաստիճան մի շարք սպաներ՝ ՆԳՆ Քրեական հետախուզության վարչության գնդապետ Հաջի Մամեդովի գլխավորությամբ: Ձերբակալություններից մոտ երկու շաբաթ անց՝ մարտի 23-ին, մեկ օրվա ընթացքում պաշտոնանկ արվեցին Ադրբեջանի ՆԳՆ առաջին փոխնախարար Զահիդ Դունյամալիևը, Քրեական հետախուզության վարչության պետ Զաքիր Նասիրովը[3] (ինչպես նաև նրա երկու տեղակալները), Թմրադեղերի առքուվաճառքի դեմ պայքարի վարչության պետ Նիյազի Խալիլովը, Ներքին անվտանգության վարչության պետի տեղակալ Քյամալ Սադրադինովը և Բաքու քաղաքի ոստիկանության գլխավոր վարչության պետի օպերատիվ-հետախուզական հարցերի գծով տեղակալ Զավադաղ Սուլթանովը:

Այլ կառույցներ.- Ուժային կառույցներում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում պետք է դիտարկել նաև Ադրբեջանի Արդարադատության նախարարության դատական որոշումների կատարման գլխավոր վարչության պետ, նույն նախարարության փոխնախարար Այդին Գասիմովի պաշտոնանկությունը (ազատվել է զբաղեցրած պաշտոնից՝ համաձայն Իլհամ Ալիևի 2005թ. հունվարի 28-ի հրամանագրի): Պաշտոնանկ էին արվել նաև այդ վարչության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ:

Մարտի 19-ին Իլհամ Ալիևի հրամանագրով Սուդաբա Հասանովան ազատվեց Ադրբեջանի Գերագույն դատարանի նախագահի պաշտոնից, նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվեց նրա առաջին տեղակալ Ռամիզ Ռզաևը, որը նույն օրը ավելի վաղ խորհրդարանի կողմից ընտրվել էր Գերագույն դատարանի անդամ: Նույն մարտի 19-ին Իլհամ Ալիևի ստորագրած մեկ այլ հրամանագրով Ադրբեջանի Վերաքննիչ դատարանի նախագահ

[1] Կարծում ենք, այդ առումով հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Ադրբեջանի ՊՆ-ում ստուգումները անց են կացնում ոչ թե ադրբեջանական ՊՆ Տեսչական գլխավոր վարչության (ղեկավարն է գեներալ-մայոր Մամեդ Բեյդուլաևը) աշխատակիցները, այլ գլխավորապես ԱԱՆ ներկայացուցիչները:

[2] Անշուշտ, պատկերն ամբողջացնում է վերը ներկայացված Ադրբեջանի ԱԱՆ Ռազմական հակահետախուզության գլխավոր վարչության նախկին պետ Էլման Գամբարովի տեղափոխումը ՊՆ:

[3] Ավելի ուշ՝ 2005թ. հուլիսի 8-ին, Զաքիր Նասիրովը կալանավորվեց: Ադրբեջանի ԱԱՆ ներկայացրած մեղադրանքների համաձայն՝ ՆԳՆ Քրեական հետախուզության վարչության նախկին պետը հանդիսացել է Հաջի Մամեդովի հանցախմբի փաստացի ղեկավարը:

Գյուլզար Ռզաևան ազատվեց զբաղեցրած պաշտոնից։

Եվ վերջապես, ս.թ. ապրիլի 26-ին Ադրբեջանի խորհրդարանում կայացած քվեարկության արդյունքում երկրի գլխավոր դատախազի պաշտոնում հինգ տարի ժամկետով վերընտրվեց Զաքիր Գարալովը։

Այսպիսով, մոտ մեկ տարվա ընթացքում (2004թ. ամառ-2005թ. ամառ) Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը բավական լուրջ քայլեր ձեռնարկեց երկրի ուժային կառույցներում սեփական ազդեցության շեշտակի մեծացման ուղղությամբ։

Ուժային ողջ համակարգում տեղի ունեցած շարժերից ամենից կարևորը Ադրբեջանի ԱԱՆ նոր նախարարի նշանակումն էր։ Չնայած տարածված կարծիքի համաձայն՝ Էլդար Մախմուդովը համարվում է անձամբ Ալիև-կրտսերի մերձավոր մարդկանցից մեկը, սակայն հատուկ ուշադրության է արժանի այն տեղեկությունը, ըստ որի՝ նոր նախարարը ծագումով[1] Նախիջևանի Շարուրի շրջանից է («նախիջևանյան» կլանի շարուրյան խմբավորում), որի ղեկավարն, ինչպես հայտնի է, Իլհամ Ալիևի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիևն է։

Էլդար Մախմուդովի նշանակումը թույլ տվեց, հենվելով երկրի ԱԱՆ համակարգի կարողությունների վրա, ադրբեջանական ուժային կառույցների ողջ ճակատով իրականացնել ճնշման, մաքրազտման քաղաքականություն՝ ԱԱՆ, ՊՆ, ՆԳՆ, դատախազություն, Արդարադատության նախարարություն, Գերագույն դատարան, Վերաքննիչ դատարան, որի ուղղակի հետևանքը հանդիսացավ ադրբեջանական ուժային ողջ համակարգում երկրի նախագահի վճռորոշ ազդեցության վերականգնումը։

Պետք է ենթադրել, որ 2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրությունների կապակցությամբ ընդդիմադիր թեկնածու, «Մուսավաթ» կուսակցության նախագահ Իսա Ղամբարի օգտին բանակի մի շարք կառույցներում վերը նշված «քվեարկությունները» կապված էին, թերևս, առաջին հերթին Զալալ Ալիևի կլանի՝ հնարավորինս թույլ նախագահ տեսնելու քաղաքականության հետ, և այդ առումով չպետք է բացառել, որ որոշ ժամանակ նրանց օգտին գործած լիներ նաև պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը։ Հակառակ պարագայում դժվար է պատկերացնել, որ ադրբեջանական զինված ուժերում գոյություն ունեցող գրեթե բաց քվեարկության պայմաններում զինվորները և կրտսեր սպայական կազմը իրենց ձայնը տային ընդդիմադիր թեկնածուի օգտին։

Ադրբեջանական ուժային կառույցների հիերարխիկ կառուցվածքում նկատելի է Ադրբեջանի գլխավոր դատախազ Զաքիր Գարալովի դիրքերի ամրապնդումը։ Նա ոչ միայն հինգ տարի ժամկետով վերահաստատվեց իր

[1] Պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ Էլդար Մախմուդովը ծնվել է 1956թ. Բաքվում։

պաշտոնում, այլև նրա առաջին տեղակալ Ռամիզ Ռզաևը (ենթադրելի է՝ նրա իսկ երաշխավորությամբ) նշանակվեց Ադրբեջանի Գերագույն դատարանի նախագահ:

Ընդհանուր առմամբ, արդեն 2005թ. ամռան վերջին՝ խորհրդարանական ընտրությունների գրեթե նախօրեին, Իլհամ Ալիևը կարողացավ շոշափելի հաջողությունների հասնել երկրի ուժային կառույցներում սեփական ազդեցության ընդլայնման գործում[1]:

Ադրբեջանական ընդդիմությունը

2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրություններից հետո ներքաղաքական իրադրությունն Ադրբեջանում ձեռք բերեց հարաբերական կայունություն: Գլխավոր պատճառը ընտրություններին ընդդիմության *փաստացի* պարտությունն էր: Ընդդիմադիր դաշտի հիմնական թեկնածու համարվող, «Մուսավաթ» կուսակցության նախագահ Իսա Ղամբարի անկարողությունը՝ տեր կանգնել իրեն տրված քվեներին, ընտրություններից անմիջապես հետո ընդդիմության կազմակերպած հանրահավաքների անարդյունավետությունը և լայնածավալ ձերբակալություններն ընդդիմադիր ուժերի շրջանում ադրբեջանական հասարակության աչքում զգալիորեն հեղինակազրկեցին ընդդիմադիր հիմնական կուսակցություններին:

Ըստ էության, 2003թ. ադրբեջանական ընդդիմությունը եզրափակեց շոշափելի կորուստներով. քաղաքական հեղինակության ու քաղաքական գործընթացներում ազդեցության անկում, և այդ իրավիճակն իներցիոն կերպով իր շարունակությունն ունեցավ նաև 2004թ.:

Որպես իրավիճակի փոփոխության առաջին նշաններ, թերևս, կարելի է դիտարկել առաջնորդի փաստացի փոխարինման գործընթացը ընդդիմադիր դաշտում, որը սկսվեց 2004թ. վերջերին՝ ենթատեքստ ունենալով 2005թ. նոյեմբերին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները: Խոսքը գլխավորապես վերաբերում է Իսա Ղամբար («Մուսավաթ» կուսակցության նախագահ) - Ալի Քերիմլի («Ադրբեջանի ազգային ճակատ» կուսակցության՝ «բարեփոխականներ» (ԱԱՃԿբ) նախագահ) զույգին: 2004թ. վերջ - 2005թ. սկիզբ ժամանակահատվածում Ի.Ղամբարի քաղաքական հեղինակության անկման և ավելի պասիվ դիրքորոշման անցնելու ֆոնին սկսեց աստիճանաբար ուրվագծվել Ա.Քերիմլիի ակտիվ գործու-

[1] Բնականաբար, այդ համատեքստում պետք է դիտարկել 2005թ. սեպտեմբերի սկզբին Իլհամ Ալիևի հրամանագիրը, ըստ որի Բաքու քաղաքի ոստիկանության Արագ արձագանքման գնդի մարտիկների աշխատավարձը բարձրացվեց մոտ վեց անգամ (այսպես՝ այդ գնդի կրտսեր սպայական կազմի ներկայացուցիչը պետք է ստանա մոտ $400 ամսական աշխատավարձ): Երկրի ճանապարհային ոստիկանության համակարգի աշխատակիցների աշխատավարձը բարձրացվեց հինգից յոթ անգամ. հետայսու Ադրբեջանում ճանապարհային ոստիկանության շարքային աշխատակիցը պետք է ստանա մոտ $350 ամսական աշխատավարձ, իսկ սպայական կազմը՝ $500-700:

նեությունը: Պետք է ասել, որ այդ գործընթացի կայացմանը, առաջին հերթին, «անուղղակի» աջակցություն ցուցաբերեց ադրբեջանական զարգացումներում ներգրավված արտաքին ուժերի զգալի մասը:

Այսպես, 2005թ. փետրվարին ԱԱՃԿԲ նախագահը մոտ երկու շաբաթ գտնվում էր Արևմտյան Եվրոպայում (Շվեդիա, Նորվեգիա, Ֆրանսիա) և ԱՄՆ-ում, ուր հանդիպումներ ունեցավ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության Մայրցամաքային Եվրոպայի դեպարտամենտի ղեկավար Ժան-Ֆրանսուա Տերալի, ֆրանսիական ԱԳՆ Վերլուծության և կանխատեսման վարչության աշխատակիցների, ԱՄՆ պետքարտուղարի ժողովրդավարության և համաշխարհային հարցերով տեղակալ Պաուլա Դոբրինսկու, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ և Կասպիցի հարցերով ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվեն Մանի, ինչպես նաև հետխորհրդային տարածքում ամերիկյան քաղաքականության մեջ որոշակի ազդեցություն ունեցող հաստատությունների՝ Վաշինգտոնում գտնվող Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (ԱԺԻ, *National Democratic Institute)* և Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ, *International Republican Institute)* ներկայացուցիչների հետ[1]:

Ապրիլի վերջերին Ա.Քերիմլին կրկնեց իր արտասահմանյան այցելությունները՝ այս անգամ ժամանելով Գերմանիա: Բեռլինում նա հանդիպեց այն ժամանակ իշխող Սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոխնախագահ Հերլոտ Էրերի (որը հայտնի էր միջազգային-քաղաքական հարցերի վերաբերյալ կուսակցությունում կայացվող որոշումների վրա իր ազդեցությամբ), Գերմանիայի Կանաչների կուսակցության միջազգային հարցերի գծով փոխնախագահ Ֆրից Կունցի (կուսակցության նախագահն է Գերմանիայի նախկին արտգործնախարար Յոշկա Ֆիշերը), գերմանական ԱԳՆ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար Ռոլֆ Շելսի և այլոց հետ:

Ավելի ուշ՝ հունիսի 18-ից հուլիսի 3-ը, ԱԱՃԿԲ նախագահը գտնվում

[1] Պատահականություն չէ, որ ԱԱՃԿԲ նախագահի արտասահմանյան այցերից հետո, արդեն 2005թ. մարտի 18-ին, ադրբեջանական ընդդիմության հիմնական կուսակցություններից «Մուսավաթի», Դեմոկրատական կուսակցության և նույն ԱԱՃԿԲ նախագահներ Իսա Ղամբարը, Ակիֆ Շահբազովը (Ակիֆ Շահբազովն այդ ժամանակ հանդիսանում էր Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնակատարը. կուսակցության նախագահն է Ռասուլ Գուլիևը) և Ալի Քերիմլին ստորագրեցին համաձայնագիր նախընտրական ընդդիմադիր դաշինքի («Ուղուր» - *հայ.* ՝ հաջողություն) ձևավորման վերաբերյալ: Ս.թ. հունիսի 10-ին վերոհիշյալ երեք կուսակցությունների ղեկավարության համատեղ նիստի ժամանակ որոշում կայացվեց դաշինքը կոչել «Ազադլիգ» (*հայ.* ՝ ազատություն): «Ուղուր» դաշինքի կազմից դուրս մնաց ադրբեջանական մյուս խոշոր ընդդիմադիր ուժը՝ «Ադրբեջանի ազգային անկախություն» կուսակցությունը (ԱԱԱԿ), որի առաջնորդ հռչակված Էթիբար Մամեդովի գլխավորությամբ 2005թ. ապրիլի 12-ին տեղի ունեցավ ընդդիմադիր մյուս՝ «Յենի սիյասեթ» (*հայ.* ՝ նոր քաղաքականություն) դաշինքի ստեղծման վերաբերյալ փաստաթղթի ստորագրումը (ԱԱԱԿ առաջնորդից զատ, փաստաթուղթը ստորագրեցին Ազգային միասնության շարժման ղեկավար Լալա Շովքեթը, «Հանուն Ադրբեջանի» հասարակական ֆորումի նախագահ Էլդար Նամազովը, Ժողովրդավար մտավորականության միության ղեկավար Ալի Մասիմլին և Մտավորականության միության նախագահ Էլդանիզ Գուլիևը): Հարկ է առանձնացնել այն հանգամանքը, որ նույն ապրիլի վերջին հայտնի դարձավ, որ Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովը հայտարարել է «Յենի սիյասեթին» իր միանալու մասին:

էր Թուրքիայում, ուր հանդիպումներ ունեցավ այդ երկրի արտաքին գործերի նախարար Աբդուլա Գյուլի, թուրքական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Մեհմեդ Դուլգերի, Թուրքիա-Ադրբեջան միջխորհրդարանական հանձնաժողովի թուրք համանախագահ Նալուկ Իփեքի և այլոց հետ:

Եվ վերջապես, օգոստոսի 29-30-ը Ա.Քերիմլին Իսա Ղամբարի հետ միասին գտնվում էր Լեհաստանում, ուր այդ ժամանակ միջազգային բավական ներկայացուցչական ձևաչափով նշվում էր «Սոլիդարնոստ» հասարակական շարժման 25-ամյակը:

Կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ, մինչև 2005թ. հուլիսի կեսերը Միացյալ Նահանգների, Եվրամիության և անգամ Թուրքիայի ամենատարբեր բնույթի կառույցների շնորհիվ Ադրբեջանի քաղաքական դաշտում ընթանում էր ընդդիմադիր միասնական թեկնածուի ձևավորման գործընթացը՝ հանձին Ա.Քերիմլիի: Բնականաբար, իրավիճակի զարգացման այդ տարբերակի դեպքում, արդեն 2005թ. նոյեմբերի 6-ի նախօրեին Ալիև-կրտսերի վարչակարգը կարող էր լուրջ խնդիրների բախվել. Ադրբեջանի բավական անձնավորված քաղաքական մշակույթում Իլհամ Ալիևը ձեռք կբերեր այլընտրանք[1]:

Սակայն արդեն 2005թ. հուլիսի վերջերից ադրբեջանական ընդդիմադիր դաշտում առաջնորդի առումով ստեղծվեց բավական երկիմաստ իրավիճակ, ընդ որում՝ առաջին հերթին նույն արևմտյան կառույցների աջակցությամբ: Եթե մինչ այդ որպես Ալիև-կրտսերի վարչակարգի *իրական* ընդդիմություն գերազանցապես ներկայացվում էր «Ազադլիգ» նախընտրական դաշինքը[2], իսկ վերջինիս մրցակից «Յենի սիյասեթ» դաշինքի փաստացի ղեկավար Էթիբար Մամեդովը գտնվում էր մի տեսակ տեղեկատվական ստվերում[3], ապա 2005թ. ամռանից իրավիճակը, ըստ էության, սկսեց աստիճանաբար փոխվել: 2005թ. հուլիսին Վաշինգտոնում կայացած Միջազ-

[1] Ադրբեջանական ընդդիմության միասնական թեկնածուի ձևավորմանն ուղղված քաղաքականության գագաթնակետը հանդիսացավ 2005թ. հուլիսի 4-ին Ադրբեջանի Ազգային միասնության շարժման ղեկավար Լալա Շովքեթի հայտարարությունն այն մասին, թե ինքը լքում է «Յենի սիյասեթ» դաշինքը՝ հակաալիևյան պայքարում վերջինիս պասիվ լինելու պատճառով և միանում է «Ազադլիգին»: Կասկածից վեր է, որ նման իրադարձությունից հետո Ալի Քերիմլիի մրցակից «Յենի սիյասեթը» և անձամբ նրա առաջնորդ Էթիբար Մամեդովը պետք է ունենային վարկանիշային շոշափելի կորուստներ:

[2] Այդ առումով որպես Իլհամ Ալիևին այլընտրանք ինքնաբերաբար հասկացվում էր Ալի Քերիմլին:

[3] Բացի այդ, ժամանակ առ ժամանակ ադրբեջանական ընդդիմադիր (մեծ մասամբ «Ազադլիգ» դաշինքին մերձակա) մամուլում ի հայտ էին գալիս բավական թափանցիկ ակնարկներ «Յենի սիյասեթ» - Իլհամ Ալիևի վարչակարգ և «Յենի սիյասեթ» (դաշինքի մաս կազմող Այազ Մութալիբովի միջոցով) - Մոսկվա գոյություն ունեցող կապերի մասին: Այդ առումով ուշադրության էր արժանի «Յենի սիյասեթում» ընդգրկված ուժերի նկարագիրը՝ նրանց մեծ մասը հանդիսանում են Ալիևների վարչակարգի նախկին ու անգամ ներկա գործակիցները: Օրինակ՝ Էլդար Նամազովը անցյալում Հեյդար Ալիևի քարտուղարության ղեկավարն էր: Ինքը՝ Էթիբար Մամեդովը, և նրա գլխավորած «Յենի սիյասեթ» դաշինքը նախընտրական ողջ ժամանակաշրջանում որդեգրել էին գերազանցապես պասիվ պայքարի ձև, ինչը շատ հաճախ բավական ակնառու էր: Ընդհանրացնելով՝ անգամ պետք չէ բացառել հետևյալ եռյակի գոյությունը՝ Մոսկվա - Էթիբար Մամեդովի գլխավորած «Յենի սիյասեթ» նախընտրական դաշինք - Ալիև-կրտսերի վարչակարգ: Եռյակի գլխավոր նպատակն էր իրավիճակը *status quo-ին* հնարավորինս մոտ պահելը:

գային ժողովրդավարական միության (ՄԺՄ, *International Democratic Union)* համաժողովի ընթացքում Էթիբար Մամեդովի ընտրվելն այդ ազդեցիկ կազմակերպության փոխնախագահի պաշտոնում[1] տեղեկատվական դաշտում նրա զբաղեցրած դիրքի առումով ունեցավ բավական լուրջ նշանակություն, ինչն էլ վարչական ու ֆինանսական շոշափելի կարողություններից զուրկ ընդդիմադիր գործչի պարագայում նշանակում է նախընտրական հիմնական ռեսուրսների ավելացում:

Կասկածից վեր է, որ ՄԺՄ փոխնախագահի պաշտոնում «Յենի սիյասեթի» առաջնորդի ընտրվելն անհնար կլիներ առանց, առաջին հերթին, ամերիկյան կողմի աջակցության: Հետևաբար, Է.Մամեդովի ՄԺՄ փոխնախագահ ընտրվելը հարկ է գերազանցապես դիտարկել որպես Ադրբեջանի քաղաքական դաշտի վրա ազդող տեղեկատվական բնույթի գործողություն, որի նպատակն Ալի Քերիմլիին հավասարակշռելն էր:

2005թ. ամռան վերջին արդեն այդ հանգամանքից, թերևս, կարելի էր որոշակի հետևություններ անել Միացյալ Նահանգներ - Իլհամ Ալիևի վարչակարգ պայմանավորվածությունների մասին:

Ընդհանուր առմամբ, 2005թ. նոյեմբերի 6-ի նախօրեին ադրբեջանական ընդդիմությունը հանդես էր գալիս առանց ընդգծված առաջնորդի (ի տարբերություն վրացական կամ ուկրաինական սցենարների), ինչը լուրջ նախապայման է ընտրությունների արդյունքների վրա քիչ թե շատ շոշափելի ազդեցություն ունենալու համար: Ի հավելումն՝ չնայած գործադրված ջանքերին, մինչև ընտրությունների օրն այդպես էլ տեղի չունեցավ «Ազադլիգ» ու «Յենի սիյասեթ» նախընտրական դաշինքների միավորումը:

Ամփոփելով՝ պետք է եզրակացնել, որ նմանատիպ իրավիճակների կառուցվածքային վերլուծության առումով հարկ է առանձնահատուկ ուշադրություն հատկացնել ընդդիմությանը և նրա շուրջ ընթացող զարգացումներին: Իր բնույթով լինելով ավելի բաց համակարգ՝ ընդդիմադիր դաշտում առկա իրավիճակը, ընդդիմադիր հիմնական ուժերի իրական քաղաքականությունը շատ ավելի մեծ հնարավորություն են տալիս հասկանալու տվյալ երկրի քաղաքական իրավիճակը, ներքին ու արտաքին հիմնական դերակատարների իրական նպատակները և ի վերջո՝ առաջիկա զարգացումների առնվազն ընդհանուր պատկերը:

[1] Նշենք, որ երեք տարով ՄԺՄ նախագահ ընտրվեց Ավստրալիայի վարչապետ, տեղի Լիբերալ կուսակցության նախագահ Ջոն Հովարդը, իսկ փոխնախագահների շարքում կարելի է տեսնել Հունաստանի վարչապետ Կոստաս Կարամանլիսին, Նորվեգիայի արտգործնախարար Յան Պետերսոնին, ս.թ. սեպտեմբերին Գերմանիայի խորհրդարանական ընտրություններում Անգելա Մերկելի դաշնակիցը համարվող բավարական Քրիստոնեա-սոցիալիստական միության նախագահ Էդմունդ Շտոյբերին և այլոց:

Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունները

Բուն խորհրդարանական ընտրությունների ընթացքը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի.

- մինչընտրական զարգացումներ, որոնց արդյունքում հիմնականում նախանշվեց խորհրդարանական ընտրությունների «անցկացման» սցենարը,
- հետընտրական իրավիճակ, որն ավելի շատ առնչություն ունի խնդրի աշխարհաքաղաքական կողմի հետ։

Հատկանշական է, որ նոյեմբերի 6-ին կայացած քվեարկությունը, ըստ էության, ոչինչ չորոշեց։ Ե՛վ մեկ ապացույց, որ արդեն այդ օրվա դրությամբ Ալիև-կրտսերը երկրի ներսում չուներ իրական ընդդիմություն, իսկ Ադրբեջանից դուրս՝ բոլոր հիմնական դերակատարների հետ, ձեռք էին բերվել կոնկրետ պայմանավորվածություններ։

Մինչընտրական զարգացումներ.- Նոյեմբերի 6-ից անմիջապես առաջ (հոկտեմբերի երկրորդ կեսին) կտրուկ սրվեց ներքաղաքական իրավիճակն Ադրբեջանում։ Իշխանությունների հետագա գործողությունները՝ ներքին զորքերի և հատուկ նշանակության ջոկատայինների մի ստվար կազմի դուրսհանումը մայրաքաղաք Բաքվի փողոցներ՝ զինտեխնիկայի ուղեկցությամբ, Ադրբեջանի ուժային գրեթե ողջ համակարգի՝ ծառայության իրականացման խստացված ռեժիմին անցնելը վկայում էին, թե որքան լուրջ էր ընդունվել հավանական սպառնալիքը Ալիև-կրտսերի վարչակարգում[1]։

Նշվածը հարկադրում է ենթադրել, որ այդ սպառնալիքն իրականում չէր կարող բխել միայն ադրբեջանական ընդդիմության (հիմնականում՝ «Ազադլիգ», «Յենի սիյասեթ» նախընտրական դաշինքներ) շարքերից։ Այսինքն՝ Ալիև-կրտսերը խնդիր ուներ թե՛ իր գլխավորած համակարգի ներսում, թե՛ արտաքին որոշ դերակատարների հետ։

Մինչընտրական զարգացումները հիմնականում ընթացան երկու կետի՝ ադրբեջանական խորհրդարանի նախկին խոսնակ, Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Ռասուլ Գուլիևի «թռիչքի» և դրան հետևած բարձրանուն ձերբակալությունների շուրջ։

Դեռևս հոկտեմբերի 10-ին Ռասուլ Գուլիևը հայտարարեց, թե սույն հոկտեմբերի 17-ին ինքը մտադիր է իննամյա դեգերումներից հետո ի վերջո վերադառնալ հայրենիք՝ մասնակցելու ս.թ. նոյեմբերի 6-ին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրություններին։ Վերադարձն, ինչպես հայտնի է, չկայացավ։ Նույն հոկտեմբերի 17-ին Գուլիևը ձերբակալվեց Սիմ-

[1] Թերևս, կարելի է ենթադրել, որ սպառնալիքի աղբյուրը կարող էր հանդիսանալ արտաքին և ոչ թե ներքին ինչ-որ ուժ։

ֆերոպոլում (Ուկրաինա)։ Երկու օրից ազատ արձակվելուց հետո նա մեկնեց Կիև, այնուհետև՝ Լոնդոն, իսկ, այժմ կրկին հանգրվանել է Միացյալ Նահանգներում, ուր Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցության նախագահը ժամանակին ստացել է քաղաքական ապաստան։

Ակնհայտ է, որ Ռասուլ Գուլիևի Բաքու «վերադառնալու» ակցիան տեղեկատվական, *PR*-ային բնույթի, ըստ էության, հաջողված գործողություն էր, որը, խոշոր հաշվով, աջակցություն գտավ առնվազն ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ուկրաինայի և Հունաստանի (կապված վերջին ժամանակներս նկատվող Ադրբեջան-Հյուսիսային Կիպրոս հարաբերությունների ջերմացման հետ) կողմից։

Պետք է ենթադրել, որ այդ գործողության հիմնական նպատակն էր տեղեկատվական հզոր ճնշում գործադրել Ալիև-կրտսերի վարչակարգի վրա, ինչպես նաև բարձրացնել ադրբեջանական ընդդիմադիր դաշտում անձամբ Ռ.Գուլիևի ու նրա գլխավորած Դեմոկրատական կուսակցության հեղինակությունը, ինչը, փաստորեն, տեղի ունեցավ. այդ օրերին ադրբեջանական և արտերկրի ԶԼՄ-ը լուրջ ուշադրություն էին դարձնում Գուլիևի «թռիչքին» և ընդհանրապես՝ Ադրբեջանում ժողովրդավարության խնդիրներին։

Օրինակ, Գուլիևի ձերբակալությունը Սիմֆերոպոլում, իսկ այնուհետև ազատ արձակումը (ընդ որում՝ միջազգային տեղեկատվական դաշտում մոդայիկ և գերազանցապես դրական լուսաբանմամբ հանդես եկող ուկրաինական հանրահայտ «Պոռա» շարժման ներկայացուցիչների մասնակցությամբ) տեղեկատվական դաշտում ընկալվեց որպես Գուլիևի առնվազն բարոյական հաղթանակ Ալիև-կրտսերի վարչակարգի դեմ, ինչը շատ կարևոր էր նոյեմբերի 6-ի ընտրություններից առաջ։ Այդ առումով պատահական չէր ընտրված նաև «վերադարձի» ամսաթիվը՝ հոկտեմբերի 17. հաջորդ օրն իսկ՝ հոկտեմբերի 18-ին, Ադրբեջանում նշվելու էր երկրի անկախության օրը։

Արդեն իսկ այդ օրերին և էլ ավելի ընդգծված՝ ներկայումս, նկատելի է ընդդիմադիր մյուս առաջնորդների (առաջին հերթին՝ Ադրբեջանի ազգային ճակատ «բարեփոխականներ» կուսակցության նախագահ Ալի Քերիմլիի) համեմատաբար սառը վերաբերմունքը Գուլիևի շուրջ առկա իրավիճակին։ Պետք է ենթադրել, որ հարցի հետ կապված՝ «Ազադլիգ» նախընտրական դաշինքում առաջացել էր որոշ տարակարծություն։ Թերևս, Քերիմլին իր համար սպառնալիք էր համարում Գուլիևի վերելքը։ Ի դեպ, արձագանքի սառնության առումով հատկապես ցցուն էր մրցակից «Յենի սիյասեթ» նախընտրական դաշինքի օրինակը, ինչը, մրցակիցներ լինելու հանգամանքից զատ, թերևս, առաջին հերթին պետք է բացատրել Մոսկվայի (դաշինքի անդամ է ներկայումս Ռուսաստանի մայրաքաղաքում գտնվող Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովը) և որոշակի առումով Ալիև-կրտսե-

րի վարչակարգի հետ այդ դաշինքի համեմատաբար ավելի ջերմ հարաբերություններով, ինչպես նաև վերը նշված Մոսկվա-Բաքու հավանական պայմանավորվածություններով:

Ըստ ամենայնի, Ի.Ալիևը Ռ.Գուլիևին դիտարկում է որպես իր, թերևս, ամենավտանգավոր հակառակորդը: Այդ ենթադրության հիմք են ծառայում Գուլիևի անձնական կարողության[1], Ադրբեջանի իշխող վարչախմբում նրա պահպանվող ազդեցության և Արևմուտքում ունեցած կապերի գործոնները: Ընդ որում՝ ադրբեջանական իշխող վարչախմբի հատկապես միջին շերտի համար անհրաժեշտության դեպքում շատ ավելի հեշտ ու ձեռնտու է պայմանավորվել ոչ այնքան վաղ անցյալում «իրենց մարդը» համարվող Ռասուլ Գուլիևի, քան, օրինակ, նույն Ա.Քերիմլիի կամ Ի.Ղամբարի հետ: Պետք է ասել, որ նման երևույթը որոշակի առումով ընդհանրական է հետխորհրդային երկրների համար: Այդ իմաստով պատահական չէին Գուլիևի «թռիչքին» հաջորդած բարձրանուն ձերբակալություններն Ադրբեջանում: Չնայած, մյուս կողմից, այդ ձերբակալությունների մեջ զգացվում էր Ի.Ալիևի՝ հարմար պահն օգտագործելու մտադրությունը:

Ռ.Գուլիևի «թռիչքի» հետ միաժամանակ, հոկտեմբերի 17-ից Ադրբեջանում տեղի ունեցան մի շարք (ընդհանուր թվով մոտ երկու տասնյակի հասնող) բարձրաստիճան պաշտոնանկություններ և ձերբակալություններ, որոնք շոշափելի փոփոխություն մտցրին Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի մեջ:

Ադրբեջանի տնտեսական զարգացման նախարար Ֆարհադ Ալիևի ձերբակալությունը Ալիև-կրտսերի մերձավոր շրջապատում դիտարկվեց որպես ավելի բարձր իշխանական հավակնություններ ունեցող, Արևմուտքում և ադրբեջանական ընդդիմության (որոշ տեղեկությունների համաձայն՝ Ֆ.Ալիևը հովանավորում էր Ա.Քերիմլիին[2]) շրջանում կապեր ունեցող (այստեղ, թերևս, հարկ է ավելացնել նաև՝ արևմտյան որոշ շրջանակների կողմից քաջալերվող ու ընդունելի անձ, երիտասարդ բարեփոխական), ինչպես նաև տնտեսական զգալի կարողությունների տեր անձնավորության չեզոքացում: Այդ հանգամանքը Ի.Ալիևի վարչախմբի կողմից մատուցվեց որպես «պայքար հակապետական դավադրության, կոռուպցիայի դեմ»:

Մի փոքր այլ պատմություն է Ադրբեջանի առողջապահության նախարար Ա.Ինսանովի ձերբակալությունը, որը, առաջին հերթին, պետք է կապել Հեյդար Ալիևի եղբոր՝ Զալալ Ալիևի և Ի.Ալիևի միջև վերը ներկայացված հակասությունների հետ: Ինչպես արդեն նշել ենք, Հ.Ալիևի մահվանից

[1] Ադրբեջանի դատախազությունը Ռասուլ Գուլիևին մեղադրում է պետությունից մոտ $120 մլն գողանալու մեջ:

[2] Հարկ է առանձին ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Ֆարհադ Ալիևի ձերբակալությունը «Ազադլիգ» դաշինքը ներկայացնում էր որպես իշխող վարչախմբի համեմատաբար առողջ, բարեփոխական ուժի չեզոքացում: Մինչդեռ «Յենի սիյասեթը» անմիջապես աջակցություն ցույց տվեց Ալիև-կրտսերի գործողություններին:

հետո նրա եղբայրը մեկ անգամ չէ, որ դժգոհություն էր հայտնել «իշխանությունը երիտասարդին փոխանցելու» հանգամանքից: Այդ առումով հատկանշական էր, որ 2005թ. գարնանը Ի.Ալիևի կողմից վերահսկվող ադրբեջանական *ANS* մասնավոր մեդիա-հոլդինգը իսկական տեղեկատվական արշավ էր սկսել Ադրբեջանի նախագահի հորեղբոր՝ Ջ.Ալիևի դեմ: Այդ առումով հայտնի էին Ջ.Ալիև-Ա.Ինսանով կապերը:

Մյուս կողմից, սակայն, Ա.Ինսանովի ձերբակալությունը որոշակի առնչություն ունի Ռասուլ Գուլիև-Ֆարհադ Ալիև զույգի զարգացումների հետ՝ հանդիսանալով «Ջ.Ալիև-Ի.Ալիև հակասություններ» թեմայի տրամաբանական շարունակությունը: Ա.Ինսանովի ձերբակալությունը նույնպես ներկայացվեց «հակապետական դավադրությունների և կոռուպցիայի դեմ պայքարի» համատեքստում:

Այսպիսով, մոտավորապես ս.թ. հոկտեմբերի սկզբից Միացյալ Նահանգները շեշտակիորեն մեծացրեց ճնշումը Ալիև-կրտսերի վարչակարգի նկատմամբ: Հոկտեմբերի 5-ին ԱՄՆ-ում 1997-1999թթ. ընթացքում Ադրբեջանի «բարձրաստիճան պաշտոնյաներին» տասնյակ միլիոնավոր դոլարների կաշառք տալու մեջ մեղադրվեցին հանրահայտ Վիկտոր Կոզենին և նրա ամերիկացի երկու գործընկերները՝ Ֆրեդերիկ Բուրկը և Դևիդ Պինկերտոնը:

Կոզենիի դեպքին հաջորդեց Ռ. Գուլիևի «թռիչքը»:

Այդ տեսանկյունից պետք է առանձնացնել նաև ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնական Դենիել Ֆրիդի ս.թ. Հոկտեմբերի 20-ին Բաքվում արած հայտարարությունը, թե պաշտոնական Վաշինգտոնը կճանաչի Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունների արդյունքները, եթե «էքզիթ-փոլի» և ադրբեջանական Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած տվյալների միջև եղած տարբերությունը չգերազանցի 2%-ը:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ձերբակալված նախարարներն ու բարձրաստիճան այլ պաշտոնյաներն (այդ թվում՝ երկրի ներքին գործերի համակարգից) առաջին հերթին մեղադրվեցին «պետական հեղաշրջման կազմակերպման մեջ»: «Կաշառակերության» վարկածն ի հայտ եկավ ավելի ուշ: Եթե սրան հավելենք նաև այն հանգամանքը, որ «դավադիրներին» վնասազերծելու գործողությունը ողջ ընթացքում գտնվում էր 2004թ. ամռանը Իլհամ Ալիևի կողմից Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարի պաշտոնում նշանակված Էլդար Մախմուդովի անմիջական ղեկավարման ներքո[1], ապա իրականում Ալիև-կրտսերի վար-

[1] Օրինակ՝ Ֆարհադ Ալիևի ձերբակալման գործողությունն անձամբ գլխավորում էր Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարության Ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ Խիլալ Ասադովը, ով համարվում է ԱԱՆ նախարար Էլդար Մախմուդովի մերձավոր մարդկանցից մեկը և ՆԳՆ-ից ԱԱՆ էր տեղափոխվել (ինչպես և Էլդար Մախմուդովը) 2004թ. ամռանը՝ ԱԱՆ նախարարի պաշտոնում Էլդար Մախմուդովի նշանակումից քիչ անց:

չակարգում բավական լուրջ էին տրամադրված գոյություն ունեցող վտանգի ընկալման հարցում:

Վերոհիշյալին պետք է հավելել նաև իշխանական համակարգում մրցակիցներից (ներկլանային խմբավորումներ) ազատվելու Իլհամ Ալիևի մտադրությունը:

Հետընտրական իրավիճակ.- «Հետընտրական իրավիճակի» առաջին նշաններն ի հայտ եկան դեռևս նոյեմբերի 6-ի ընտրություններից առաջ: Մասնավորապես, արդեն հոկտեմբերի 27-ին գտնվելով Գյանջայում՝ Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռինո Հարնիշն ուղղակի կոչ արեց ադրբեջանական ընդդիմությանը զերծ մնալ բռնությունների կիրառումից, ինչը կարող է խանգարել ընտրությունների ընթացքին:

Ընդամենը մեկ օր անց, Վաշինգտոնում *«Heritage»* հիմնադրամի կազմակերպած կլոր սեղանի ժամանակ գրեթե նույն բառերը կրկնեց վերոնշյալ Դենիել Ֆրիդի տեղակալ Մեթյու Բրայզը: Ի հավելումն՝ նոյեմբերի 2-ին ամերիկյան *«The Washington Times»* թերթում հատուկ հոդվածով հանդես եկավ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով Քոնդոլիզա Ռայսի նախկին (2001-2005թթ. ընթացքում) տեղակալ Էլիզաբեթ Ջոնսը: Ամերիկացի դիվանագետը իրականում ևս մեկ անգամ փորձում էր ապացուցել Ադրբեջանի ռազմաքաղաքական և տնտեսական կարևորությունը ԱՄՆ համար[1]:

Ամերիկյան պաշտոնատար անձանց բարյացակամ վերաբերմունքը, սակայն, կարճ տևեց, և արդեն նոյեմբերի 8-ին ԱՄՆ պետքարտուղարությունն իր պաշտոնական համաձայնությունը հայտնեց մեկ օր առաջ՝ նոյեմբերի 7-ին հրապարակված Եվրախորհրդարանի, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ), ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի ու ՆԱՏՕ Խորհրդարանական վեհաժողովի պատվիրակներից կազմված Միջազգային համատեղ դիտորդական առաքելության այն գնահատականին, թե ընտրությունները չէին համապատասխանում ԵԱՀԿ և Եվրոպայի խորհրդի առաջարկած չափանիշներին[2]:

Ի հակակշիռ վերոնշյալի՝ Ռուսաստանի գլխավորությամբ աշխատող ԱՊՀ դիտորդական առաքելությունը, ինչպես նաև թուրքական[3] ու իրանա-

[1] Նոյեմբերի 6-ից առաջ կարելի էր ստանալ, թե ԱՄՆ-ը որոշակի խոստումներ է տալիս և՛ Ալիև-կրտսերի վարչախմբին, և՛ ընդդիմությանը (հատկապես՝ «Ազադլիգ» դաշինքի ներկայացուցիչներին): Հետագա իրադարձությունները ցույց տվեցին այդ ենթադրության ճշմարտացի լինելը:

[2] Երեքշաբթի՝ նոյեմբերի 8-ին, Եվրամիության անունից նույնատիպ հայտարարություն արեց նաև Մեծ Բրիտանիան, որը մինչև այս տարվա վերջ նախագահելու է ԵՄ-ում: Ուշագրավ է, որ ամերիկա-եվրոպական այդ դիրքորոշմանը միացավ նաև պաշտոնական Կիևը, որը նույնպես իր տեսակետի հիմքում դրեց վերոհիշյալ Միջազգային համատեղ դիտորդական առաքելության գնահատականը: Ուկրաինական այդ դիրքորոշումն, ըստ էության, նոր տարր է ԱՊՀ տարածքին ուղղված Կիևի քաղաքականության մեջ, որի հիմքում ընկած է մերձբալթյան հանրապետությունների, Լեհաստանի ու Վրաստանի հետ «սնծովյան-կասպյան ժողովրդավարությունների» համակարգի ստեղծման մոդելը:

[3] Ճիշտ է, Թուրքիայի արտգործնախարարությունը հետագայում կոչ արեց պաշտոնական Բաքվին ուշադրություն դարձնել ընտրությունների ժամանակ տեղ գտած որոշ խախտումների վրա:

կան դիտորդական առաքելությունները ընտրությունները բնութագրեցին որպես ժողովրդավարական: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն անգամ շնորհավորեց Ալիև-կրտսերին՝ ընտրությունների անցկացման կապակցությամբ, և ըստ որոշ տեղեկությունների՝ առաջիկայում պետք է ժամանի Բաքու:

Այսպիսով, տպավորություն է ստեղծվում, թե անցած ժամանակահատվածում Վաշինգտոնը կարողացել է զգալի հաջողությունների հասնել Ադրբեջանի հետ իր ունեցած խնդիրների լուծման գործում: Այդ խնդիրները հիմնականում բաժանվում են չորս մասի՝ շարժուն զորամիավորումներ (այս պարագայում պետք է ավելացնել Ուզբեկստանից ամերիկացիների հեռանալու հանգամանքը), Ադրբեջանը և Կասպից ծովը որպես տարանցիկ ուղի դեպի Կենտրոնական Ասիա (ընդհանրապես՝ Ադրբեջանը որպես հարմար հենակետ), կասպյան էներգակիրներ և իրանական հարց: Ներկայացվածի համատեքստում հետաքրքրական է, որ ընտրություններից առաջ՝ հոկտեմբերի 26-ին, տեղի էր ունեցել Միացյալ Նահանգների փոխնախագահ Դիկ Չեյնիի հեռախոսազրույցը Իլհամ Ալիևի հետ:

Իր հերթին, ակնհայտ էր, որ կոնկրետ ընտրությունների հետ կապված՝ Ալիև-կրտսերը որևիցե լուրջ խնդիր չունեցավ հատկապես ամերիկյան կառույցների հետ: Ավելին, Իլհամ Ալիևի վարչակարգի բավական կոշտ պահվածքը միջազգային մի շարք դիտորդների, լրագրողների նկատմամբ (որոշ դեպքերում՝ նրանց վտարումը Ադրբեջանից)[1] պարզապես ստիպում է մտածել ընտրություններից առաջ Վաշինգտոն-Բաքու հավանական պայմանավորվածության մասին:

Սակայն այդքանով հանդերձ, հարցը չի կարող փակված համարվել նման «պարզունակ» գործարքով: ԱՄՆ պետքարտուղարության նոյեմբերի 8-ի հայտարարությունը և Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպան Ռինո Հարնիշի գործունեության որոշակի փոփոխությունը՝ հանդիպումներն ընդդիմության ներկայացուցիչների հետ, Ադրբեջանի իշխանություններին ուղղված դեսպանի կոչերը՝ մի շարք ընտրատարածքներում «վերականգնել արդարությունը» և այլն, կարող են վկայել հետևյալի մասին.

- Վաշինգտոնը քայլեր է ձեռնարկում նոր միջոցների ստեղծման ուղղությամբ, որոնց օգնությամբ հետագայում կկարողանա Ալիև-կրտսերի վարչակարգի նկատմամբ մեծացնել իր ազդեցությունը կամ, որոշ պարագաներում՝ նաև ճնշումը,
- ԱՄՆ-ը քայլեր է ձեռնարկում՝ ուղղված միջազգային հարաբերություններում սեփական հեղինակության պահպանմանը,

[1] Ցայտուն օրինակներից մեկն ամերիկյան ազդեցիկ *National Democrtaic Institute-ի (NDI)* դիտորդներին արգելելն էր ժամանել Ադրբեջան՝ մոնիթորինգի ենթարկելու նոյեմբերի 6-ի խորհրդարանական ընտրությունները: Եվ դա այն պարագայում, երբ այս ամառ՝ հուլիսի 12-14-ը, Բաքվում էր *NDI-ի* ղեկավար, ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթը, որը հանդիպել էր նաև նախագահ Իլհամ Ալիևի հետ:

- ընդհանուր առմամբ, ԱՄՆ քաղաքականությունը միտված է Իլհամ Ալիևի վարչախմբի հետագա հեղինակազրկմանը:

Ստեղծված իրավիճակում ուշագրավ է «եվրոպական գծի» պահվածքը: Ներկայումս Եվրամիությունը որդեգրել է տեղի ունեցած ընտրությունների նկատմամբ ամենաբացասական դիրքորոշում (օրինակ՝ Բաքվում Հունաստանի, Նորվեգիայի դեսպանների պահվածքը և այլն): Այդ հանգամանքը կարող է, առաջին հերթին, կապված լինել նախընտրական պայմանավորվածություններում Բրյուսելի կարծիքը սահմանափակ կերպով հաշվի առնելու հետ: Ի դեպ, այս առումով նկատելի է Հարավային Կովկասում Եվրամիության դիրքերի որոշակի թուլացում. Վրաստանի արտաքին գործերի այլևս նախկին նախարար Սալոմե Զուրաբիշվիլու պաշտոնանկության դեպքը, թերևս, կարող է ծառայել որպես ցուցիչ: Ըստ ամենայնի, առաջիկայում պետք է սպասել մեր տարածաշրջանում «եվրոպական ընդհանրական գծի» հետագա թուլացում:

Սխալված չենք լինի, եթե նշենք, որ ԱՄՆ-ից հետո իրավիճակից փորձեց առավելագույնս շահեր քաղել Ռուսաստանը: Պուտինի հրապարակային աջակցությունը Ալիև-կրտսերին, ընտրություններից առաջ ռուսական հատուկ ծառայությունների նախկին ու ներկա մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների այցերը (այդ թվում՝ ս.թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի Արտաքին հետախուզության ծառայության պետ Սերգեյ Լեբեդևի ժամանումը Բաքու) Ադրբեջանի մայրաքաղաք, ընտրություններին ԱՊՀ դիտորդական առաքելության դրական գնահատականը այդ ամենի վկայությունն են:

Առկա իրադրությունում Կրեմլի համար, ըստ էության, ամենից հարմար թեկնածուն Մոսկվայում կրթություն ստացած, այդ թվում հոր՝ Հեյդար Ալիևի շնորհիվ խորհրդային հատուկ ծառայությունների հետ բավական սերտ կապերի մեջ եղած Իլհամ Ալիևն է: Որպես պահեստային տարբերակ ռուսական կողմը փորձեց խաղարկել ներկայումս Մոսկվայում բնակվող, Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովի գործոնը՝ նաև «Յենի սիյասեթ» նախընտրական դաշինքի շրջանակներում[1]:

Ռուսական գործոնի իմաստով ուշագրավ է նաև Ադրբեջանի տնտեսական զարգացման նոր նախարարի նշանակումը: Այդ պաշտոնում նորանշանակ Հեյդար Բաբաևը հայտնի է մոսկովյան գործարար շրջանակների հետ իր ունեցած բավական լուրջ կապերով (եղել է ռուսաստանյան «Մոստբանկի» փոխնախագահը, իսկ այնուհետև՝ ադրբեջանական մասնաճյուղի ղեկավարը և այլն):

Ամենևին էլ պատահական չէր թուրքական կողմի աջակցությունը

[1] Ուշագրավ է, որ թե՛ Ռասուլ Գուլիևի, թե՛ Այազ Մութալիբովի «մուտքը» Ադրբեջանի քաղաքական դաշտ փորձ էր արվում իրականացնել քաղաքական գրեթե նույն տեխնոլոգիայով՝ «փրկչի վերադարձը հայրենիք»:

Ալիև-կրտսերին: Ավանդական դաշնակցային հարաբերություններից զատ, այս ընտրությունների ժամանակ կարևոր դեր խաղացին նաև Հյուսիսային Կիպրոսի հարցում պաշտոնական Բաքվի նոր նախաձեռնությունները՝ ընդգծված թուրքամետ, ինչն էլ, իր հերթին, կարող է նշանակել Ալիև-կրտսերի վարչակարգում Անկարայի դիրքերի զգալի ուժեղացման մասին: Այդ առումով հարկ է նշել, որ խախտվել է Հեյդար Ալիևի օրոք առկա Թուրքիայի հետ Ադրբեջանի հարաբերությունների հավասարակշռությունը: Առաջիկայում, թերևս, պետք է սպասել այդ գործընթացի խորացում:

Նկատելի էր իրանական դերակատարության պասիվությունը: Թեհրանի պասիվությունն ու իրանական դիտորդական առաքելության հայտարարությունը, թե ընտրությունները համապատասխանում էին ժողովրդավարության չափանիշներին, կարող են վկայել այն բանի մասին, որ Ադրբեջանի քաղաքական դաշտում ներկայումս Իրանը չունի որևէ լուրջ ռեսուրս. իսլամական գործոնը դեռ բավական ուժեղ չէ: Հետևաբար իրանական քաղաքականության, թերևս, գլխավոր նպատակն է լարվածություն չառաջացնել Ալիև-կրտսերի վարչակարգի հետ՝ նաև հաշվի առնելով ամերիկա-իրանական հարաբերություններում Ադրբեջանին շատ հաճախ հատկացվող դերակատարությունը:

Հետևություններ

Կարելի է հանգել այն եզրակացությանը, որ 2005թ. նոյեմբերի 6-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում Իլհամ Ալիևին հաջողվեց վերականգնել իր գերակա ազդեցությունն Ադրբեջանում առկա ուժի ամենատարբեր կենտրոնների նկատմամբ և այդ առումով առժամանակ վերացնել պետության համար վտանգավոր կլանային փաստացի մասնատման վտանգը, ինչը բավական իրական էր 2003թ. նախագահական ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածում:

Սակայն, մյուս կողմից, համակարգային առումով խնդրին տրված չէ ռազմավարական լուծում: Ավելին, խնդրի լուծման մեթոդները հուշում են հետագայում նույնի կրկնության անխուսափելիության մասին:

Քիչ հավանական է, որ մինչև 2008թ. նախագահական ընտրությունները Ադրբեջանի իշխանական համակարգում տեղի ունենան լուրջ փոփոխություններ: Անշուշտ, չպետք է ամեն ինչ բացառել, սակայն հաշվի առնելով Ադրբեջանում Իլհամ Ալիևի վարչախմբի հանդեպ ուժեղ ընդդիմության[1] բացակայությունը, իշխող վարչակարգի կողմից արտաքին դերա-

[1] Ի դեպ, այդ ընդդիմությունը կարող էր ձևավորվել այս խորհրդարանական ընտրությունների արդյունքում, եթե իշխանական համակարգում գտնվող մարդիկ՝ նաև դրսից ստացված աջակցության միջոցով, կարողանային խորհրդարան անցկացնել հնարավորինս մեծ թվով «իրենց մարդկանց»: Այդ քայլը կարող էր հանդիսանալ 2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրությունների ժամանակ Իլհամ Ալիևի նկատմամբ իր իսկ համակարգի ներսում առկա ընդդիմադիրների գործունեության տրամաբանական շարունակությունը: Բարձրանուն ձերբակալությունները կարծես թե կանխեցին նման զարգացումը:

կատարների հետ առժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունները և տարածաշրջանային զարգացումների կանխատեսելիության համեմատաբար ընկալելի վիճակը՝ պետք է ենթադրել, որ լուրջ փոփոխություններ իշխանական համակարգում, ըստ ամենայնի, բացառվում են:

Մյուս կողմից՝ Ադրբեջանի թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր դաշտում ստեղծված իրավիճակը հուշում է առաջիկայում համապատասխան նոր «դեմքերի» ի հայտ գալու մասին, ինչը նաև պետք է դիտարկել վերոհիշյալ արտաքին քաղաքական իրողության համատեքստում:

Հայաստանի պարագայում հարկ է նշել, որ Ադրբեջանի նախագահի պաշտոնում Իլհամ Ալիևի գտնվելը, թերևս, մեզ համար չի նվազեցնում այդ երկրի կանխատեսելիության աստիճանը[1], սակայն, մյուս կողմից, այդ երկրի համար կարող է ապահովել ռեսուրսների կուտակման համեմատաբար կայուն մի ժամանակաշրջան:

[1] Այսինքն՝ Ադրբեջանի համար Ալիև-կրտսերի առաջարկած համակարգը իրականում թույլ է տալու այդ վարչախմբի ստրատեգներին, առաջին հերթին, մտածել «ընտրությունից ընտրություն» ընկած ժամանակահատվածի տրամաբանությամբ: